ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1949, № 3 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ.—ԳԵՐՄԱՆԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԶԱԽՈՂՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Հայպետհրատ, Երևան, 1948 թ., էջ 204։

Անդրկովկասի ժողովուրդները զայրույթով ու ատելությամբ են մտաբերում իրենց հայրենիքի օկուպացիայի սև օրերը, օկուպացիա, որ տեղի ունեցավ գերմանա-թուրքական զավթիչների՝ իսկ այնուհետև էլ անգլո-ֆրանսիական իմպերիալիստների կողմից, համաշխարհային առաջին պատերազմի տարիներին։ Այդ օրերը՝ վրացի, հայ և ադրբեջանցի ժողովուրդների համար՝ օտարերկրյա զավթիչների պատճառած սովի, թալանման և ֆիզիկական բնաջնջման օրեր էին։

Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Ամերիկայի իմպերիալիստները ինչպես և նրանց թուրքական գործակալները իրենց պլանների մեջ միշտ էլ հատուկ ուշադրություն էին հատկացնում Կովկասին, որպես Եվրոպայի և Ասիայի սահմանի վրա գտնվող ստրատեգիական պլացդարմի, որպես մի երկրի՝ որ շատ հարուստ է իր բնական ռեսուրսներով։

Ա. Մնացականյանը պատմում է առաջին համաշխարհային պատերազմից առաջ գերմանա-թուրքական գործակալության կողմից Կովկասում կատարված աշխատանքի մասին, աշխատանք, որը պատերազմի դեպքում պետք է նախապատրաստեր Անդրկովկասի զավթումը գերմանա-թուրքական զորքերի կողմից։

Գրքի հեղինակն օգտագործելով մեծ քանակությամբ արխիվային նյութեր ու գրականություն, շոշափել է քաղաքական մեծ կարևորություն, հրատապություն ունեցող խնդիր։ Ներկայումս անգլո-ամերիկյան իմպերիալիստները և նրանց թուրքական գործակալները համաշխարհային նոր պատերազմի պլաններ են մտորում։ Նրանց հանգիստ չեն տալիս սոցիալիզմի երկրի հարաճուն հզորությունը՝ մեր երկրի բնական հնարավորությունները։ Ինչպես առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, այժմ էլ թուրքական կառավարողներն իրենց երկիրը օտարերկրյա իմպերիալիստներին ի սպաս են դրել։ Այսօրվա Թուրքիան կառավարողների քաղաքականությունը շատ է հիշեցնում նրանց նախնիների՝ երիտասարդ թուրքերի քաղաքականությունը։ Ա. Մնացականյանի գրքում բերված են փաստական ճոխ նյութեր, որոնցից շատերը առաջին անգամ են հրապարակվում. այդ նյութերը ցույց են տալիս գերմանա-թուրքական գործակալների՝ Ռուսաստանի դեմ ուղղած հետախուզիչ գործունեության ձևերը։

Բարեխղճորեն օգտագործելով ձեռքի տակ եղած արխիվային նյութերը, Ար. Մնացականյանը լուսաբանում է իր առաջ դրված պրոբլեմը։

«Ներկա աշխատության նպատակն է,— գրում է նա,— ցույց տալ, թե ինչպես էին գերմանական և թուրքական զավթիչները ծրագրում ու նախապատրաստում Կովկասի զավթումը, Կովկասյան ժողովուրդների գաղութացումը դեռևս առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ինչպես այդ նպատակի համար աշխատող գերմանա-թուրքական ռազմա-քաղաքական գործակալները լիակատար ձախողման ենթարկվեցին» (էջ 22)։

Ա. Մնացականյանի գիրքը բաղկացած է ներածական մասից և յոթ գլխից։ Վերջում տրվում է հոդվածագրություն, բերվում է օգտագործված աղբյուրների և արխիվային նյութերի ցանկը։

Ներածական մասում հեղինակը համառոտակաղ է առնում Թուրքիայի նեղկա քաղաքական դրության վրա, ցույց տալով թե ինչպես Թուրքիան ԱՄՆ-ի «օգնությամբ» ռազմա-ռազմատեգիական բազա է դառնում նրա համար։

Գրքում մանրամասնորեն է խոսվում այն մասին, թե ինչ տվին Թուրքիային «Տրումենի դոկտրինը» և այն 100 միլիոն դոլլարը, որ

ստացել է Թուրքիան և որը նա ծախսում է ամերիկացիների հսկողությամբ, բացառապես ռազմական նպատակներով։ Այդ «օգնության» արդյունքն ակներև է. Թուրքիան հեղեղվել է ամերիկյան ռազմական և տնտեսական միսիաներով, քաղաքական խորհրդատուներով ու զանազան մասնագետներով։ Կրկնվում է այն, ինչ որ մենք տեսանք առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ գերմանացիք, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, Թուրքիային դարձրել էին «... իրենց ֆինանսական և ռազմական վասսալը...»։[1]

Գրքում տրված է Թուրքիայի պատմության առանձին փուլերի համառոտ տեսությունը, տրված է նրա տնտեսական և քաղաքական հետամնացությունը. 1906 թվի բուրժուական վերնախավային ռևոլյուցիան ոչինչ չփոխեց և Քեմալ Աթաթուրքը դառնությամբ ստիպված էր հավաստել «Արոր»,— ահա այն գրչածայրը, որով գրվում է Թուրքիայի պատմությունը։ Այդ հետամնացությամբ է պայմանավորված Թուրքիայի՝ օտարերկրյա պետություններից կախման մեջ լինելու փաստը։ Բայց դրա հետ միաժամանակ օսմանյան կայսրությունը երբեք էլ չի հրաժարվել զավթողական պլաններից և միշտ էլ երազել է այդպիսի պլաններ։ Պանթուրքիզմի, պանիսլամիզմի իդեոլոգիան թուրքական սուլթանների, փաշաների և ռեսպուբլիկական Թուրքիայի որոշ ռեակցիոն գործիչների այդ խենթ ու խելառ պլանների արդյունքն է։ Այդ պլանները սովորաբար աջակցություն են գտել այն իմպերիալիստական երկրներից, որոնք զանազան ժամանակներում ուղղություն են տվել Թուրքիայի քաղաքականությանը և նրա օգնությամբ աշխատել են ամրապնդել իրենց դիրքերը Բալկաններում, Մերձավոր և Միջին Արևելքում։

Ա. Մնացականյանը բերում է շատ հետաքրքիր փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, թե լկտիության ինչ աստիճանի էին հասել թուրքական իմպերիալիստները, իրենց հափշտակողական ձգտումների մեջ։

Այդ փաստաթղթերից մեկում, որը երիտասարդ թուրքերը 1914 թվին կոչի ձևով տարածել էին իրենց զինվորների մեջ, կարդում ենք.

«Մուսուլմաններ, բարձրացնենք մեր ձայնը, և թուրն աջ ձեռքում, հրացանը ձախ ձեռքում, ռումբերը գրպանում, աստծու անունը շուրթերիս, լույսի հավատը սրտերումս, հոշակենք հետևյալ պահանջները.

Հնդկաստանը— Հնդկաստանի մահմեդականների համար,

Ճավան— Ճավայի մահմեդականների համար,

Ալժիրը— Ալժիրի մահմեդականների համար,

Մարոկկոն— Մարոկկոյի մահմեդականների համար,

Թունիսը— Թունիսի մահմեդականների համար,

Եգիպտոսը— Եգիպտոսի մահմեդականների համար,

Թուրանը— Թուրանի մահմեդականների համար,

Բուխարան— Բուխարայի մահմեդականների համար,

Կովկասը— Կովկասի մահմեդականների համար,

Օսմանյան կայսրությունը— օսման մահմեդականների համար... և այլն (էջ 20)։

Այս փաստաթուղթը հաստատում է հեղինակի այն միտքը, որ առաջին համաշխարհային պատերազմին Թուրքիան մասնակցեց ոչ միայն և ոչ այնքան, այն պատճառով, որ նրան պատերազմի դրդեցին (գերմանացիները), այլև այն պատճառով, որ նա այդ պատերազմում հետապնդում էր իր իմպերիալիստական շահերը։

Հեղինակը իրավացիորեն քննադատում է այն մարդկանց, որոնք ելնելով Թուրքիայի չեզոքության սկզբնական դիրքերից, հակամետ են կարծելու, թե Թուրքիան 1914 թվին պատերազմի մեջ է մտել միայն Գերմանիայի ճնշմամբ։

Գրքի մեջ գտնում ենք Ռուսաստանը նվաճելու պլանը՝ կազմված թուրքական գլխավոր շտաբում, դեռևս 1912 թվին։ Թուրքիայի այդ ձգտումները շատ ձեռնտու էին Գերմանիային, որն ուներ իր հաշիվները. ռուսների դեմ Կովկասում ֆրոնտ ստեղծելով որոշ քանակությամբ ռուսական դիվիզիաներ զբաղեցնել այստեղ և թուլացնել Ռուսաստանը Արևմտյան ռազմաճակատում։ Իսկ ցարական Ռուսաստանը, չնայած Կ. Պոլիսն ու նեղուցները զավթելու իր իմպերիալիստական ձգտումներին, պատերազմի սկզբում չէր ուզում բաց անել Կովկասյան ֆրոնտը։

Այսպիսով ակնհայտնի է էնվեր—Թալաաթ—Ջեմալի երիտասարդ թուրքերի կառավարության իմպերիալիստական զավթողական քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և հետագայում։

Ներածական մասում Ա. Մնացականյանը ցույց է տալիս այն հրապարակված աշխատությունները, որոնց մեջ այս կամ այն չափով լուսաբանված է գերմանա-թուրքական հետախուզության գործունեությունը Կովկասում։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, ռուս. հրատ., հատ. 19, էջ 367։

Գրքի առաջին գլուխը նվիրված է գերմանա-թուրքական իմպերիալիստների Կովկասում ունեցած գավթողական պլաններին։

Այստեղ տրված է գրականության վերլուծություն, մեծ մասամբ գերմանական գրականության, որտեղ գավթողական պլանների մեջ հատուկ տեղ է հատկացված Կովկասին և Մերձավոր Արևելքին։

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ պատերազմի գերմանական տեսաբան Ֆայկա—Շուպպան «Ուկրաինան Գերմանիայի համար կամուրջ է դեպի Արևելք» գրքում գրել է.—

«Ուկրաինան և Կովկասը հանդիսանում են այն կամուրջը, որի վրա հանդիպում են Արևմուտքի և Արևելքի կուլտուրաները» (էջ 28)։

Գերմանական իմպերիալիզմի իդեոլոգ Ռորբախը եղել է Գերմանիայի գաղութային քաղաքականության ներշնչողներից մեկը։ Որպես Արտաքին գործերի մինիստրության արևելյան բաժնի ղեկավար, իր պաշտոնական ելույթներում նա միշտ շեշտել է Կովկասը, Թուրքիան և Իրանը գավթելու անհրաժեշտությունը։

Նա հայտարարել է — «Հայաստանը իր աշխարհագրական դիրքով...հանդիսանում է այն դիրքի բանալին, որը տիրապետում է Անատոլիայի վրա։ Կովկասը, Թուրքահայաստանը և իրանական Ադրբեջանը հանդիսանում են «պլացդարմ Փոքր Ասիայի նկատմամբ»։

Մերձավոր Արևելքը, Իրանը և Հնդկաստանը գրավելն անհնարին էր առանց այդ պլացդարմն ունենալու իր տրամադրության տակ։ Այստեղից էլ հետևում էր գերմանական իմպերիալիզմի տենդային նվաճողական քաղաքականությունը Կովկասում։

1907 թվին լույս է տեսել Ռուդոլֆ Մարտինի «Բեռլին Բաղդատ» գիրքը, որտեղ նա բացորոշ կերպով խոսում է Ռուսաստանի հետ տեղի ունենալիք առաջիկա պատերազմի նպատակների և Կովկասում գերմանացիների իշխանության ներքո «Թիֆլիզի փոխարքայություն» կազմակերպելու մասին (տես Տոկարժևսկի, Ն. Ա.— «Բաքվի բոլշևիկները որպես գերմանա-թուրքական ինտերվենտների դեմ մղվող պայքարի կազմակերպիչներ Ադրբեջանում, 1918 թվին»։ Աշխատություններ ԻՄԵԼ-ի Ադրբ. ֆիլիալի, գիրք 6-րդ, 1947 թ., էջ 9—10)։

Այնուհետև Մնացականյանը բերում է գերմանական իմպերիալիզմի իդեոլոգներ՝ Ֆոն Լյուցիուսի, Ռուշեր Ռոդբերտուսի, դոկտոր Նպրինգերի և ուրիշների կարծիքները արևելքի գերմանական գաղութարարների մտադրությունների մասին։

Բայց գերմանացիները ոչ միայն պրոպագանդա են սնում արևելքում տիրապետություն հաստատելու իրենց գավթողական իդեաները, այլև այդ ուղղությամբ կոնկրետ քայլեր են նախաձեռնում։ Նրանց գործունեությունն արևելքում ակտիվանում է 19-րդ դարի 2-րդ կեսին։ Ուքսունական թվականներին նրանք ստանում են Թուրքիայում առաջին կոնցեսիաները, գլխավորապես երկաթուղային շինարարության բնագավառում (Հայդար Փաշա—Իզմիր, իսկ այնուհետև մինչև Անգարա)։ 1903 թվին Թուրքիայի հետ ստորագրվել է Բաղդադի երկաթուղու շինարարության կոնվենցիան։ Դրանից հետո գերմանացիները տենդային գործունեություն են սկսում ոչ միայն այդ ճանապարհի շինարարության մեջ (առաջին վարիանտով ճանապարհը պիտի անցներ Տաճկահայաստանի տերիտորիայով դեպի Պարսից ծոցը), այլև ամրացնում են Թուրքիայում իրենց դիրքերը և աստիճանաբար դուրս են մղում անգլիացիներին և ֆրանսիացիներին։

1903 թվի ռևոլուցիայից հետո, երբ երիտասարդ Թուրքերը, որոնք վարում էին գերմանոֆիլ քաղաքականություն, անցան իշխանության գլուխ, համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին հաստատվեց Թուրքիայում գերմանացիների բացարձակ տիրապետությունը։ 1913 թվի դեկտեմբերին Թուրքիա ժամանեց գերմանական «ռազմական միսիան՝ գեներալ Լիման ֆոն-Սանդերսի գլխավորությամբ. վերջինս և գերմանական գեսպան Վագենհայմը իրենց ձեռքը վերցրին Թուրքիայի քաղաքականության լիակատար կոնտրոլը թե՛ պատերազմի նախօրյակին և թե՛ պատերազմի տարիներին։

19-րդ դարի վերջին գերմանական իմպերիալիզմը սկսեց Իրան ներթափանցելու իր փորձերը։ Պատերազմի նախօրյակին գերմանացիները այստեղ էլ ձեռք բերին որոշ հաջողություններ։ Հայտնի է, որ 1905—1911 թ. թ. իրանական ռևոլուցիան պարտություն կրեց և դրանում փոքր դեր չխաղացին անգլիական և ռուսական զորքերը։ Դրա հետևանքով Իրանի բնակչության որոշ խավերում ստեղծվեցին հակաանգլիական և հակառուսական տրամադրություններ։ Գերմանացիները բավական հմտորեն օգտագործեցին այդ տրամադրությունները, աշխատելով ամրացնել իրենց դիրքերը։

Ռևոլուցիայի պարտությունից հետո մի քանի վտանգի լիդերներ գաղթել էին Բեռլին, որտեղ և ստեղծվել էր իրանական «դեմոկրատների կոմիտեն», որը դարձել էր գերմանական հետախուզության գործակալություն։ Հենց պատերազմի նախօրյակին Իրանի դեմոկրատները հանդես եկան որպես գերմանա-թուրքական

ռիենտացիայի կողմնակիցներ։ Գերմանացիներին մեծ օգնություն ցույց տվեց իրանական ժանդարմերիան, որի ղեկավարներն էին շվեդական սպաները։ Գերմանացիներն օգտագործում էին Իրանի դժգոհ ցեղերին, զինելով նրանց և ուղղություն տալով նրանց գործունեությանը, ընդդեմ ռուսների և անգլիացիների։ Գերմանական իմպերիալիզմի գործակալներ էին Իրանի մի քանի բարձրաստիճան անձնավորություններ, ինչպես, օրինակ՝ պրինց Սալաթ-էդ-Դուլեն իրանական Ազգրբեջանում, որը աշխատում էր միացնել զանազան ցեղեր (հատկապես շահսեվաններին) և դուրս բերել նրանց Ռուսաստանի դեմ։ (Տես Տ. Կորոտկովա— Գերմանա-Թուրքական ներխուժումը Իրանական Ազրբեջան. „Вопросы Истории", № 1, за 1948 г.).

Գերմանական իմպերիալիստների պլաններով Իրանը ինչպես առաջին, այնպես և երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ պետք է պլացդարմի դեր խաղար Անդրկովկասի և մասնավորապես Բաքվի վրա հարձակում գործելու համար։ Այդ նպատակով ստեղծվել էր գործակալների մի մեծ ցանց և մշակվել Ռուսաստանի դեմ ուղղված դիվերսիայի պլան։

Այդպիսով՝ Ռուսաստանի դեմ մղվող պատերազմում գերմանական իմպերիալիստները օգտագործում էին թուրքական և պարսկական «եակցիան՝ պլացդարմներ նախապատրաստելով հարավից՝ Ռուսաստանի վրա հարձակվելու համար։

Արևելքը գավթելու ընդհանուր պլանի մեջ, ինչպես արդեն նշվել է, Կովկասն իր հատուկ տեղն էր գրավում։ Այստեղ էլ ծավալվել էր մեծ լրտեսական-գիվերսիոն աշխատանք, և բոլոր բնագավառներում տարվում էր լայն հետախուզություն։ Այդ բոլոր հետախուզական աշխատանքները ղեկավարում էին Գերմանիայի դեսպանատներն ու հյուպատոսարանները Թուրքիայում, Իրանում և Կովկասում։ Այդ ընդարձակ լրտեսական-հետախուզական գործունեության կենտրոնը գտնվում էր Կ. Պոլսում և ղեկավարվում էր գեներալ Լիման-ֆոն-Անդերսի, գերմանական դեսպան Կագենհայմի և թուրքական ռազմական մինիստր Էնվեր Փաշայի կողմից։ Մերձկովկասյան մատույցներումն էր գտնվում էրզրումի կենտրոնը, գերմանական հյուպատոս Էդգար Անդերսի գլխավորությամբ, որն ուղղություն էր տալիս հետախուզական աշխատանքին Տրանսկովկասիայի ոլորտներում։ Հենց նույն է. Անդերսը կապեր էր ստեղծել Կ. Պոլսի և Թիֆլիսի գերմանական շպիոնաժի և հետախուզության կենտրոնների միջև։ Թիֆլիսում, որը գերմանացիների հետախուզական ծառայության խոշոր կենտրոնն էր, այդ աշխատանքը գլխավորում էր գերմանական գլխավոր հյուպատոս գրաֆ Շուլենբուրգ ֆոն Բերգը։ Նրա մերձավորագույն զինակիցներն էին Թիֆլիսի թուրքական հյուպատոս Մունիր Սուրիա բեկը, Կարսի հյուպատոս Ջեմալեդդին բեկը և վերջինիս յարտուղար Հասան բեկը։ Թիֆլիսի հետախուզական կենտրոնը կապեր ուներ Իրանի, Կիևի և Պետերբուրգի կենտրոնների հետ։ Ռուսաստանում այդ ամբողջ աշխատանքը գլխավորում և ղեկավարում էր Պետերբուրգի գերմանական դեսպան Պուրտալեսը։

Այդ ամբողջ աշխատանքը, որ պահանջում էր մեծ ծախսեր, շատ մարդիկ ու ժամանակ, նպատակ ուներ գավթելու և ստրկացնելու Կովկասը, Մերձավոր Արևելքը և եթե հաջողվեր՝ նվաճելու նաև Ռուսաստանը և Արևելքի մյուս երկրները։

Մերկացնելով գերմանական և Անտանտի իմպերիալիստների նենգամիտ պլանները Արևելքում, ընկեր Ստալինը գրում էր 1918 թ., որ իմպերիալիստներին հարկավոր են ոչ միայն Արևելքի հարստությունները։

«Նրանց հարկավոր է,— գրում է ընկեր Ստալինը,— այն «հնազանդ» «մարդկային նյութը», որով հարուստ են Արևելքի գաղութները ու կիսագաղութները։ Նրանց հարկավոր է «հարմարվող» ու լծան «բանվորական ձեռքեր» Արևելքի ժողովուրդներից։ Նրանց հարկավոր են բացի դրանից, «հնազանդ» «երիտասարդ տղաներ» Արևելքի երկրներից, որոնց շարքերում նրանք այսպես կոչված «գունավոր» զորքեր են հավաքագրում և որոնց նրանք չեն հապաղի գործի դնել «իրենց իսկ սեփական» ռևոլուցիոն բանվորների դեմ»։[1]

Այդ նպատակներին հասնելու համար իմպերիալիստները ոչինչ չեն խնայել և չեն էլ խնայում։

Ար. Մնացականյանի աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է գերմանական գաղութների և ֆիրմաների՝ Կովկասում ունեցած դերին, որոնք հանդես էին գալիս որպես լրտեսական գործունեության բաղաներ։

Գերմանական գաղութները Կովկասում երևան են եկել 19-րդ դարի սկզբին։ Օդեսայում 1810 թվին գեներալ Իզնովի գլխավորությամբ կազմվել է մի հանձնաժողով, որը պետք է դրաղվեր Կովկասի առանձին շրջանները գերմանացիներով բնակեցնելու խնդրով։ Երմոլովի բարեհաճ վերաբերմունքով, որը հանձինս գերմանացիների տեսնում էր կուլտուրտրեգերներ և լեմենտներ, որոնք ցույց են տալիս տնտեսու-

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 172։

թյան վարելու օրինակելի ձևը, ստեղծվել էին առաջին գաղութները։ Կոլոնիստները անվճարարձ կերպով ստանում էին 500 ռուբլի և 30-ից մինչև 60 հեկտար անվարձ հող, հենց միանգամից էլ ստեղծում էին կուլակային ամուր տնտեսություններ։ Շուտով նրանք տեղական բնակչությանն սկսեցին շահագործել որպես բատրակների։ Ինչ վերաբերում է օրինակելի տնտեսություններին, ապա վերջիններս մնացել էին որպես փակ տնտեսություններ և գոյություն ունեին սոսկ կոլոնիստների համար։

Գերմանական կապիտալիստները թափանցել էին Կովկասի արդյունաբերության մեջ։ Արդեն 19-րդ դարի վերջում երևան էին եկել գերմանական առաջին արդյունաբերական ձեռնարկությունները, հատկապես Բաքվում, Ճիաթուրում՝ որտեղ մարգանեց էին արդյունահանում և Ալավերդու պղնձահանքերում։ Այսպես, 1893 թվին «Դոյչե բանկ»-ի մասնակցությամբ ստեղծվել էր „Deutsch – Russische Naphta Import Gesselschaft" որը նավթ էր արտահանում Գերմանիա։ «Նորել եղբայրների ընկերության» մեջ 1912 թվին մասնակցում էր գերմանական վարկային ընկերության ներկայացուցիչը։ Համբուրգում 1913 թվին ստեղծվել էր գերմանա-ռուսական ընկերություն, որը կապ ուներ խոշոր նավթարդյունաբերող Լիանոզովի հետ։ Բաքվում ստեղծվել էր նավթային խոշոր ընկերություն «Ռիպպման-Ռուստ», որն իր բաժանմունքներն ուներ ամբողջ Ապշերոնում։

Կարելի է նավթարդյունաբերության և արդյունաբերության մյուս ճյուղերի գերմանական կապիտալիստների տերերի կամ բաժնետերերի բազմաթիվ անուններ տալ, որոնց ձեռնարկությունները գտնվում էին Բաքվում, Բաթումում, Ճիաթուրում և Ալավերդում։ Գերմանացիներին հաջողվել էր զավթել ռազմական արդյունաբերության մի այնպիսի կարևոր ճյուղ, ինչպիսին վառոդի արտադրությունն էր։ Վառոդի արտադրության և վաճառքի ընկերության կենտրոնը գտնվում էր Իռլինում, իսկ բաժանմունքները՝ Պետերբուրգում, Թիֆլիսում և մյուս քաղաքներում։ Ընկերության գլուխ էր կանգնած գերմանացի կապիտալիստ Բեցը. վերջինս ֆաշ ուներ բաժանմունքների ղեկավարների հետ, որոնք նույնպես մեծ մասամբ գերմանացիներ էին։ Գերմանական գործակալները փորձում էին ներթափանցել արդյունաբերության բոլոր ճակատները, ամենուրեք կապ պահպանել ոչ միայն կենտրոնի, այլև պրովինցիայի հետ։ Նրանք կառուցում էին ֆաբրիկաներ, գործի գործարաններ և այլն։

Այնտեղ, որտեղ նրանց չէր հաջողվում կազմակերպել, ստեղծել, գլխավորել, նրանք դառնում էին աշխատակիցներ, դիրեկտորներ, ինժեներներ և այլն։

Տնտեսական նպատակներից բացի, այդ բոլորը հետապնդում էին նաև քաղաքական նպատակներ։ Գերմանացիները ամենուրեք զբաղվում էին լրտեսությամբ, ուսումնասիրում էին տեղի ռելյեֆը, միջավայրը, հարստությունը, ճանապարհները, ազգաբնակչության կյանքը, կենցաղը և այլն։ Նրանց համար հեշտ էր որպես մասնավոր մարդիկ՝ գործարանատեր, ինժեներ, մի խոսքով՝ որպես «գործարարս» անհատներ, լինել ամեն տեղ, հարցնել ամեն բանի մասին։ Նրանց մեջ հատուկ տեղ էին գրավում զանազան առևտրական ֆիրմաների ներկայացուցիչները։ Այդ ֆիրմաները երկրի գլխավոր քաղաքներում և կենտրոններում պարտադիր կերպով բաց էին անում իրենց բաժանմունքները։ Պատերազմի նախօրյակին Թիֆլիսում կազմակերպված Կլիչկինի և ընկերների վարկային բյուրոն միավորում էր Թիֆլիսի խոշոր վաճառական-մանուֆակտուրիստ Բրեմերին, բազմաթիվ ծաղկավաճառ խանութների տեր Մայերին և ուրիշների։ Այդ մարդիկ սերտ կապ էին պահպանում Գերմանիայի հետ։ Նրանց մոտ Գերմանիայից գալիս էին զանազան «հյուրեր», որոնք քրև էին գալիս հասարակական վայրերում, խրախճանքներ էին բաց անում զինվորական ծառայողների, երկաթուղայինների հետ։ Գերմանական խոշորագույն բանկիր Կլիչկինը միլիոնների շահույթ ստանալով, մեծ գումարներ էր հատկացրել լրտեսության և հետախուզության աշխատանքների փոխ։ Գերմանական գլխավոր շտաբին թիչ ծառայություն չէր ցույց տալիս նաև «Զինգերս» կարի մեքենաների հոչակավոր ընկերությունը, որն իր բաժանմունքներն ուներ համարյա թե Ռուսաստանի բոլոր քաղաքներում։

Այդ ընկերության կառավարիչ Բորիս Էլբստան ութ տարի աշխատում էր Կովկասում։ Իր մեքենաները վաճառելով, նա միաժամանակ որպես «սիրողական» նկարահանումներ էր անում։ Շրջագայություններից վերադառնալով Թիֆլիս, անպայման լինում էր ֆոն Շուլենբուրգի կամ նրա քարտուղար Լերցի մոտ։

Գրքի մեջ բավական մանրամասն նկարագրվում են թե այդ ընկերության և թե՛ ուրիշ առևտրական ու արդյունաբերական միավորումների ու փոխադրական ընկերությունների ագենտների գործերը։

Ինժեներ-երկրաբան Յուլի Կարլովիչ ֆոն Շմիդելը երկար ժամանակ աշխատում էր նավթ հայտաբերելու համար, գլխավորելով իր իսկ ստեղծած «Գուրիայի նավթային սինդիկատը»։ Սև ծովի ափին։ Սինդիկատն իր հողերը բաժանել էր 12 ընկերությունների և Գերմանիայից

կանչել համապատասխան քանակությամբ «մասնագետներ»։ Այդ լրտեսական բունը գրեթե 3 տարի գործում էր։ 1914 թվի հուլիսին ժանդարմական վարչությունը գիշերային հանկարծակի խուզարկության հետևանքով մերկացրեց Շմիդելին որպես խոշոր լրտեսի, ծովային սպայի և գերմանական գլխավոր շտաբի աշխատակցի։ Նրա մոտ հայտաբերվեցին ռազմական տոպոգրաֆիական քարտեզներ, սխեմաներ, ծովափի ռելեֆը և ուրիշ այլ և այլ փաստաթղթեր։ Հետախուզական նպատակներով օգտագործվում էին գերմանական գիտական և կուլտուր լուսավորական հիմնարկությունները։ 1913—1914 թվերի ընթացքում ցարական կառավարության և սեզական իշխանությունների թույլտվությամբ Անդրկովկասի և այլ վայրերի բնությունը, ռելեֆը, հողը, ջուրը, ժողովուրդների կյանքը, կենցաղն ու կուլտուրան «ուսումնասիրելու» համար Կովկաս է գալիս գերմանական գյուղատնտեսական ընկերության էքսպեդիցիան, որը շրջագայում է Սև ծովի ամբողջ ծովափը մինչև Ռազմավիրական ճանապարհով և լինում Հայաստանում։ Էքսպեդիցիայի մեջ են լինում «Ֆրանկֆուրտեր Ցայտունգ» թերթի թղթակից, դոկտոր Վալտեր Վեյբելը, փիլիսոփայության դոկտորներ Հուլիոս Կոմարեկին և Հեներիխ Վեսելովը, Վիեննայի արվեստի պատմության ինստիտուտի դիրեկտոր Իոսիֆ Ստրժիգովսկին, փիլիսոփայության դոկտոր Ա. Կլուդինը, Մյունխենի համալսարանի դոցենտներ Բուլմիստրը, Դիստելը և Ռուշը, Բեռլինի Ակադեմիայի անդամ-թղթակից Անդրուսովը և ուրիշ շատ շատերը, ըստ որում հայտնի է, որ այդ գիտնականները ռազմաստրատեգիական բնույթի նկարահանումներ են արել, նկարահանել են ռազմական նշանակություն ունեցող օբեկտներ, ուսումնասիրել են Հանապարհները, կամուրջները, երկաթուղային կայարանները և վերջին հաշվով հավաքել են լրտեսական-հետախուզական բնույթի նյութեր։

Այս բոլորը հաստատվում է օխրանկայի (պահնորդական բաժանմունքի) կամ զինվորական իշխանությունների համապատասխան տվյալներով։

«Տուրիստներ» և «գիտնականներ» Կուրիցերը, Ֆրից Միլլերը և Յոզեֆ Դերտմանը ուսումնասիրում էին Թուրքահայաստանը (վերջինս գերմանացիների հատուկ ուշադրությանն է՛ր արժանացել։ Աշնանը նրանք ցանկություն են հայտնում քարձրանալ Մասիսի գագաթը, Արագածի գագաթը, որոնք իբր թե «անմատչելի էին» տեղացիների համար։ Վերոհիշյալ գերմանացիները պարտավորաբար կապ էին պահպանում թուրքական և գերմանական հյուպատոսությունների, դեսպանությունների, տեղական գործակալների և ռեզիդենտների հետ։ Գերմանական դիպլոմատիայի օրգանները խնդրում են գերմանական և ավստրիական շտաբների լրոս սպաների «հետաքրքրություն» բավարարել» և թույլատրել նրանց ուսումնասիրելու հանքային ջրերն ու Կովկասյան կուրորտները։ Ահա հենց այդ սպաները, մատիտներով ու ֆոտոապարատներով զինված, նժույգների վրա նստած Կիսլովոդսկից ճանապարհվում են Հանքային ջրերը, Էսենտուկի և մյուս կուրորտները, զրուցելով ճանապարհին իրենց հանդիպող տեղական բնակիչների հետ։ Այնուհետև նույն սպաները Վլադիկավկազով գալիս են Թիֆլիս, այնտեղից էլ մեկնում Բորժոմ, Բակուրիանի, Բուքայիս, Բաթում։

Գերմանական դիպլոմատները խնդրել են թույլ տալ «սիրող որսորդ» լեյտենանտ Էրիխ Բերինդին, որ նա Կովկասի լեռներում որսորդությամբ զբաղվի։ Վերջապես կարճ ժամանակից հետո Կովկասում երևան է եկել «տուրիստ» սպա Էմանուել Լակրոնը, որը «որոշել էր երկրագնդի շուրջը ճանապարհորդություն կատարել ոտքով»։ Գիտենալով ռուսերենը և Կովկասյան լեզուները, Լակոնը Ջուլֆայի վրայով մեկնել է Երևան, Երևանից Ալեքսանդրապոլ, Կարս, Ախալքալաք, և այդպիսով հասնելով մինչև Սև ծով, Գրոզնի, մտել է Բաքու, Թիֆլիս, իսկ այնուհետև անհետացել է։ Շատերն այն կարծիքին են եղել, որ Լակոնը Հեռավոր Արևելքով ճանապարհվել է Ճապոնիա։

Գրքում հետաքրքիր տվյալներ են բերված, որոնք ցույց են տալիս զանազան «էքսպեդիցիաների» և «էքսկուրսիաների» աճը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։ Այսպես օրինակ՝ 1909 թվին Կովկաս են եկել 5 խումբ «էքսկուրսանտներ», 1910 թվին՝ 8, 1911 թվին՝ 13, 1912 թվին՝ 16, 1913 թվին՝ 21, և 1914 թվի առաջին կիսամյակում (մինչև պատերազմն սկսվելը) 27 «էքսկուրսիոն ճանապարհորդական» խմբեր։

Ահա այսպիսին է գերմանացիների Կովկասում ունեցած հետախուզության և շպիոնաժի աղբյուրներից մեկը։

Ա. Մնացականյանի աշխատանքի չորրորդ գլխում ցույց է տրված գերմանական և թուրքական քաղաքական պրոպագանդան Կովկասում, լրագրերների, դպրոցների, եկեղեցիների և զանազան կուլտուրական կազմակերպությունների օգտագործումն այդ նպատակով։

Այդ պրոպագանդայում հատուկ դեր խաղացել գերմանական «Կաուկազիշե պոստ» շաբաթաթերթը, որը լույս է տեսել 1906-ից մինչև 1914 թ. և փակվել է միայն 1914 թվի օգոստոսի 17-ին, պատերազմն սկսվելուց հետո։

ժուռնալը պաշտոնապես մասնավոր մարդկանց օրգան համարվելով, փաստորեն կապված է եղել Թիֆլիսի գերմանական հյուպատոս Ֆոն-Նուլենբուրգի հետ և նպաստ է ստացել կառավարության կողմից։ Հրատարակիչները գերմանական հետախուզության հետ կապված մարդիկ են եղել։ Նրանցից մի քանիսը գերմանական այլև այլ կազմակերպությունների գործունեությանը ուղղություն են տվել. օրինակ՝ 1912 թվի սկզբում ժուռնալի հրատարակիչ է դարձել Իոհաննես Շլեյնինգը, վերջինս իր ձեռքում կենտրոնացրել էր գերմանական «Դոյչեր ֆերայն» ակումբի, Թիֆլիսի գերմանական «լութերական եկեղեցու», եկեղեցուն կից «Գերմանական դպրոցի» և «Գերմանացի Ուսուցիչների Միության» ղեկավարությունը։ Շլեյնինգը եղել է խորամանկ գործարար, փորձված հետախույզ։ Նա իր օրգանի միջոցով հայտարարել է«Կաուկազիշե պոստ» ժուռնալի նպատակն ու խնդիրները, որոնք հանգում են հետևյալին.

«Ուղղություն տալ անցյալ դարի սկզբներում Վյուրտեմբերգից Կովկաս ներգաղթած գաղութարարներին, որպեսզի նրանք սրբությամբ կատարեն իրենց նախորդների պատգամները ու պահպանեն իրենց տրադիցիաները։ Լուսաբանել Կովկասում գերմանական կյանքը։ Կովկասում տարածել գերմանական քաղաքակրթությունը. պահպանել գերմանական լեզուն և այն տարածել Կովկասում. պրոպագանդա անել լութերական կրոնի գաղափարները. ազգային հարցի շուրջը ժուռնալի խնդիրն է՝ ուղղություն տալ գերմանական ֆերայներին (ընկերություններին), որոնք կազմված են գերմանացիներից և ապրում են հայրենիքից հեռու, որպեսզի նրանք հետևեն գերմանական ազգային տրադիցիաներին, պահպանեն գերմանական կազմը... Գերմանական կուլտուրայի տիրապետությունն ամենուրեք մեր իդեալն է» (էջ 81)։

Ռասիզմի և շովինիզմի ոգով ներծծված գերմանական իմպերիալիզմի այդ ծրագիրը Շլեյնինգը և նրա բարեկամները իրագործում էին իրենց ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով։ Նրանք բացահայտ լկտիությամբ քարոզում էին գերմանական ազգի առավելությունները և դատապարտում «գերմանական ոգուց» հեռացող գերմանացիներին։ «Այն գերմանացին, որը սլավոնանում է, նա ստորագույնն է», ասում էր Շլեյնինգը իր ելույթներից մեկում (էջ 83)։

Կովկասում պրուսայականության օջախներ էին գերմանական դպրոցները։ Վերջիններիս համար ամեն ինչ ուղարկվում էր Գերմանիայից։ այդտեղից ուղարկվում էին ուսուցիչներ, դասագրքեր, ծրագրեր։ Ի դեպ՝ ուսուցչի երկրորդ պրոֆեսիան նրա հետախույզ-լրտեսի աշխատանքն էր։ Գերմանական ուսուցիչները որպես գերմաներեն լեզվի դասատուներ, քափանցում էին չինովնիկների, զինվորական ծառայողների տները և այնտեղ հետախուզական աշխատանք էին կատարում։ Թիֆլիսում նրանք ունեին իրենց ընկերությունն ու կենտրոնը, ի դեմս գերմանական «Դոյչեր ֆերայն» ակումբի։ Գերմանական հետախուզությունն օգտագործում էր նաև լութերական եկեղեցիները. վերջիններիս պաշտոնատար անձանց, որոնք գտնվում էին Թիֆլիսում և Կովկասի բոլոր գաղութներում։ Հիշված եկեղեցիների ամբողջ գործունեությունը (այդ թվում և հետախուզական աշխատանքը) ղեկավարելու և կոորդինացիայի ենթարկելու համար Կովկասում ստեղծվել էր Սինոդ։ Վերջինս անհրաժեշտ պրոպագանդա էր անում, կոլոնիստների մեջ հանգանակություն էր կատարում գերմանական բանակի օգտին և աջակցություն էր ցույց տալիս գերմանական հետախույզներին։ Սինոդը անմիջական կապ էր պահպանում գերմանական գլխավոր շտաբի հետ։

Թուրքական գործակալներն էլ իրենց աշխատանքի մեջ զանազան ուղիներ էին օգտագործում հետախուզության և լրտեսության իրենց գերմանացի կոլեգաների օրինակով։ Իրենց պրոպագանդայում նրանք աշխատում էին օգտագործել Կովկասյան ժողովուրդների ազգային և կրոնական զգացմունքները, սրել նրանց և՛ իրար դեմ և՛ ռուսների դեմ։ Այդ նպատակին էր ծառայում «Թուրք-պարսկական բարեգործական ընկերությունը», որի կենտրոնը գտնվում էր Թիֆլիսում, իսկ բաժանմունքները՝ Բաքվում, Երևանում, Գյանջայում, Բաթումում և Անդրկովկասի մյուս քաղաքներում։ Ընկերությանը աջակցություն էր ցույց տալիս Թիֆլիսի Թուրքական դպրոցը. որտեղ դասավանդում էին Թուրքիայից եկած դասատուները, դպրոցում սովորում էին այնտեղից ուղարկված ձեռնարկներով և ղեկավարվում էին Կ. Գոլսից ստացված ծրագրերով։

Դասագրքերի մեջ հրամցնում էին պանթուրքիստական և պանիսլամիստական ոգով ներշնչված նյութեր։ Ընկերության կից գործող դպրոցի ուսուցիչներից ստեղծվել էր դրամատիկ խմբակ, որը հաճախ «գաստրոլներ» էր կազմակերպում Կովկասի մուսուլմանական զանազան ոլորաններում, ըստ որում այդ գաստրոլները երկու տեսակ խնդիր էին կատարում. մուսուլմանների մեջ ատելություն էին բորբոքում «անհավատների» դեմ, և հավաքում էին ռազմական քնույթի տեղեկություններ, որոնք

հետո տրվում էին Թիֆլիսի Թուրքական հյուպատոս Մունիր Սուրիա բեկին։

Ար. Մնացականյանի աշխատանքի հինգերորդ և վեցերորդ գլուխները նվիրված են գերմանա-Թուրքական գործակալության Թիֆլիսի և Էրզրումի կենտրոնների գործունեությանը։ Դրանց գործունեությունը հատկապես կենդանացել էր 1913—1914 թվերին։ Աշխատանքը կոորդինացիայի էին ենթարկում Թուրքիայում նստած գերմանական գեներալները՝ Լիման ֆոն Սանդերսը, որը Թուրքական բանակի փաստական ղեկավարն էր փաշայի տիտղոսով, և Թուրքական գլխավոր շտաբի պետի տեղակալ (պետը Էնվեր փաշան էր) գեներալ մայոր Բրոնսարտ ֆոն Շելենդորֆը։ Էնվեր փաշայի ակտիվ աջակցությամբ նրանք մշակում էին Թուրքիայի՝ Ռուսաստանի վրա արշավելու և Կովկասյան ֆրոնտը բաց անելու ստրատեգիական ուղղությունները։ Նրանց նպատակն էր գավթել Կովկասը, Ղրիմը և Միջին Ասիան, քանի դեռ Ռուսաստանը զբաղված էր Արևմուտքում։ Ռազմական գործողությունների այդ պլանները աչքի էին ընկնում իրենց ցնորամտությամբ։ Այդ պլաններով նախատեսվում էին ռուսական ռազմաճակատի ճեղքվածք առաջացնել Արդահան—Սարիղամիշ—Ուրմիա գծով, գավթել Անդրկովկասը և Հյուսիսային Իրանը, դուրս գալ Անդրկասպիա՝ գավթել Միջին Ասիան, ինչպես և թաթարներով բնակեցված Մերձվոլգյան և Ուրալի ռայոնները, «սրբազան պատերազմի» ներգրավել Դրանն ու Ավղանստանը և նրանց աջակցությամբ մուտք գործել Հնդկաստանի մուսուլմանական ռայոնները։ Այդ ցնորամոլ պլանի հեղինակների կարծիքով Թուրքական զորքերը կարող էին հաջողությամբ առաջ շարժվել դեպ հարավ, գրավել Սուեզը և ոտքի կանգնեցնել Եգիպտոսի և Հյուսիսային Աֆրիկայի մուսուլման ժողովուրդներին։ Պանթուրքիստ էնվերի այդ հիվանդոտ երևակայությանը գերմանական գեներալներն իհարկե կասկածամտորեն էին վերաբերվում։

Լիման ֆոն Սանդերսը իր օրագրի մեջ գրի է առել Էնվեր փաշայի հետ տեղի ունեցած մի խոսակցությունը նրան Կովկասյան ռազմաճակատ ուղարկելուց առաջ։

«Մեր խոսակցության վերջում, նա (Էնվերը) արտահայտեց ինձ մոտ, բոլորովին ֆանտաստիկ՝ բայց հետաքրքիր մտքեր։ Նա ասաց, որ այնուհետև նա մտադիր է Հնդկաստանի և Ավղանստանի վրա գնալ։» („Вопросы истории", № 1, 1948 г. стр. 88).

Այսպես թե այնպես, Թուրքական երես առած նացիոնալիստ-իմպերիալիստի այդ ուխտաժակը միանգամայն համապատասխանում էր գերմանացիների շահերին։ Թուրքերն ու գերմանացիները այդ պլանների մեջ հատուկ նշանակություն տալով Կովկասին, այնտեղ ծավալեցին ակտիվ հետախուզական և դիվերսիոն գործունեություն։ Մի այդպիսի գործունեության խոշոր կենտրոն էր Թիֆլիսը, որտեղ ամբողջ աշխատանքը, ինչպես վերևում հիշվեց, ղեկավարում էր գրաֆ Շուլենբուրգը։ Վերջինիս օգնում էին Թուրքիայի հյուպատոս Մունիր Մուրիան, Ավստրիայի հյուպատոս Ուրբանը և Շվեյցարիայի հյուպատոս կոմս Դրայֆենֆելսը։

1913 թվի սկզբին Շուլենբուրգի նախաձեռնությամբ ստեղծվել էր «Ավստրո-գերմանական միացյալ լեռնային ակումբ», որը փորձում էր տեղացիների համար կազմակերպել «օրինակելի տնտեսություններ»։ Այդ նպատակով գերմանացիները հեռ բերին հողամասեր։ Ակումբը Գերմանիայից տուրիստներ և «դիտական աշխատողներ» էր հրավիրում հետախուզական նպատակներով։ Ավստրո-գերմանական լրտեսների ապաստարան էր Թիֆլիսում գերմանացի Միխտերի «լոնդոն» կոչված հյուրանոցը։ Իրենք գերմանացիք այդ տան անունը դրել էին «տեսության տուն»։ Գրքում բավականաչափ փաստական նյութ է բերվում, որը հաստատում է «լոնդոն» հյուրանոցի տեսության վայր լինելու նպատակը։ Լրտեսական կազմակերպություն էր ստեղծված նաև Կովկասյան թանգարանում՝ վերջինիս դիրեկտորի տեղակալ Շմիդտի ղեկավարությամբ։ Այդ կազմակերպությունը մյուսներից ավելի երկար ապրեց և լիկվիդացիայի ենթարկվեց միայն 1916 թվին։

Ֆոն Շուլենբուրգը հետախուզական աշխատանքն անց էր կացնում ինքնուրույն գործող ագենտների միջոցով, որոնք ցրված էին ամբողջ Կովկասով և անձամբ կապ էին պահպանում նրա հետ։ Դրանց թվումն էր «ուսուցչուհի» Մարիա Վոլֆը, «Կաուկազիշե պոստ» ժուռնալի հրատարակիչներիը Ալեքսանդր Մոսլերը, ոտքով շուրջերկրյա ճանապարհորդություն կատարող Էմանուիլ Լակոնը և ուրիշները։ Նրանցից մի քանիսը պատերազմն սկսվելուց հետո թաքնվել և անցել էին Գերմանիա, իսկ ուրիշները՝ (Լակոնը) բանտարկվել էին։

Հետախուզական աշխատանքներ անցկացնելիս գերմանացիք հատկապես հաշվի էին առնում Կովկասի բնակչության բազմաթիվ ազգերից կազմված լինելը։ Նրանք մուսուլմանների մեջ վատ չէին օգտագործում Թուրքական գործակալներին։

Ա. Մնացականյանը հիշտ է նկատում, որ «Թուրքական լրտեսները համեստաբար գնալով գերմանական հետախուզների ղեկավարության ներքո և կատարելով նրանց առաջադրանքները, նպատակ ունեին օգտագործել գերմանացիներին իրենց պանթուրքիստական

ագրեսիվ պլանները կատարելու համար» (էջ 120)։ Իրենց տեղերից առաջադրություններ ստանալով, թուրքական գործակալներն աշխատում էին Կովկասի մուսուլմանական բոլոր շրջաններում, նաև Իրանում։ Նրանց մեջ աչքի էր բռնկում Կարսի թուրքական հյուպատոսության քարտուղար Հասան բեկը, որը համարյա թե ամբողջ ժամանակ գտնվում էր Թիֆլիսում։ Հասան բեկը երբեմն գնում էր Կովկասի զանազան շրջանները, ինչպես և Իրան։ Այստեղից նա Շուլենբուրգի միջոցով ռազմական և քաղաքական բնույթի, ինչպես և Կովկասի իրադրությանը վերաբերող տեղեկություններ էր հաղորդում թուրքական գլխավոր շտաբին։ «Ոչխարների գնողներ» անվան տակ Կովկասում ճանապարհորդություններ էին կատարում գլխավոր շտաբի սպաներ Ռեֆատ բեկը և Մուստաֆա էֆենդին։ Վերջիններս Հասան բեկի հետ միասին հետևում և տեղեկություններ էին տալիս Կովկասում եղած զորքերի տեղափոխությունների, նրանց կազմի, տեխնիկայի մասին և այլն։

1913 թվի ամառը, Կովկասյան շրջանի հետախուզական բաժինը հատուկ զեկուցագրով հայտնում էր թուրքական 44 գործակալների մասին, որոնք աշխատում էին Կովկասում և կապ էին պահպանում Թիֆլիսի, Կարսի, Բաթումի, Ալեքսանդրապոլի և Երևանի կենտրոնների հետ։

Գերմանա-թուրքական գործակալների բոլոր տեղեկությունները կենտրոնանում էին Թիֆլիսի գերմանական հյուպատոսարանում։ Այստեղ և Շուլենբուրգի տանը կատարված խուզարկությունը շատ բաներ բացահայտեցին։ Պարզվեց, որ Շուլենբուրգը զեկուցագրեր է ուղարկել Բեռլին, Պետերբուրգ՝ գերմանական դեսպանին և Կ. Պոլիս՝ Վագենհայմին, Սանդերսին, Էնվերին։ Երևան հանված փաստաթղթերը լիովին ցիմակազերծ են անում Շուլենբուրգին որպես հետախուզության գործակալի։ Զորքերի դիսլոկացիան և առաջխաղացումը նկարագրող և զանազան ուրիշ տեղեկություններ պարունակող փաստաթղթերից բացի, Շուլենբուրգի արխիվում գտնվել էին Կովկասի երկու մեծ քարտեզները և 42 թերթերից բաղկացած մի քարտեզ-ալբոմ։ Բավականաչափ հետաքրքիր էին նաև Շուլենբուրգի՝ Բեռլինից ստացած դիրեկտիվները։ Վերջիններս բացահայտում էին Գերմանիայի՝ Ռուսաստանում ունեցած ագրեսիվ նպատակները, ցույց են տալիս, թե գերմանացիները գործողության ինչ ձևեր ու մեթոդներ էին կիրառում այնտեղ։

Այդպիսի փաստաթղթերից մեկի մեջ կարդում ենք.

«Մեր գաղութարարների բախտի մասին անհանգստանալու կարիք չկա, Եվրոպայում պատերազմի վերջնական արդյունքները կլուծեն այդ հարցը։ Դրա համար Ռուսաստանում... պետք է առաջ բերել խառնաշփոթություններ։ Դա հակառակորդի ուժերը թայթայելու լավագույն միջոց է... բաղաքական գործակալների միջոցով անկարգություններ առաջ բերելը պետք է մանրամասն նախապատրաստվի նաև նյութական միջոցների օգտագործման ճանապարհով։ Անկարգությունները պետք է բռնկվեն հանկարծակի, կործանեն հաղորդակցության ուղիները։ Անկարգությունները պետք է ունենան այնպիսի դեկավարներ, որոնք կրոնական և քաղաքական ազդեցիկ շրջաններից են» (էջ 132—133)։

Այդ փաստաթուղթը մերկացնում է պայքարի այն կեղտոտ մեթոդները, որ կիրառում էին գերմանացիները առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում։

Ուրիշ բազմաթիվ փաստաթղթերի մեջ գտնվել են նաև այնպիսի փաստաթղթեր, որոնք կոչ են անում Ռուսաստանում ապրող գերմանացի գաղութարարներին՝ պատրաստ լինել դուրս գալու՝ «Մեծ Գերմանիայի» համար։

1913 թվի սեպտեմբերին ստեղծելով էրզրումում հյուպատոսություն, գերմանական կառավարությունը հյուպատոս, հայտնի հետախույզ Էդգար Անդերսի առաջ խնդիր դրեց գոկել Հայաստանը Ռուսաստանից և պլացդարմներ ստեղծել այստեղ, ինչպես և Անատոլիայում, հետագա հարձակողական գործողությունների համար։ Բայց այդ մասին բացահայտ կերպով հայտարարել գերմանացիներն իհարկե չէին կարող։ Ընդհակառակը, նրանք խաբում էին Թուրքիային, խոստանալով նրան Կովկասի մուսուլմանական շրջանները։ Այդ նպատակին հասնելու համար դոկտոր Ռորբախի կարծիքով հարկավոր էր հայերին Հայաստանից տեղափոխել Միջագետք և հայկական տերիտորիաները հատկացնել թուրքերին։

Գերմանիայի և Թուրքիայի գլխավոր շտաբները իրենց լրտեսական-հետախուզական գործունեության մեջ լայն չափով օգտագործում էին հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներին՝ դաշնակներին։

Պատերազմի նախօրյակին Լմիգրանտ դաշնակները Ժենևում ստեղծել էին իրենց կոմիտեն, որի գործունեությանը ուղղություն էր տալիս Ռորբախը։ Վերջինիս ցուցմունքով, ինչպես և Շուլենբուրգի և Անդերսի աջակցությամբ, 1914 թվի սկզբից կազմակերպվել էր «գերմանա-հայկական ընկերություն», որի մեջ մտել էին Գերմանիայի հայտնի քաղաքագետները և դաշնակցության դեկավար գործիչները։ Ընկերությունը մշակել էր իր ծրագիրը և ուներ

իր օրգանը։ Նա նպատակ էր դրել ապահովել Գերմանիայի ազդեցությունը Հայաստանում. Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմ ծագելու դեպքում ոտքի հանել հայերին ռուսների դեմ և աշխատել հեռացնել ռուսական զորքերը Հյուսիսային Իրանից։ Այդ բոլորն անհրաժեշտ էր գերմանացիներին և թուրքերին Ռուսաստանի դեմ մղվող ռազմական գործողությունները դյուրացնելու համար։ Դաշնակների բոլոր տպագիր օրգանները սկսում են քարոզել այդ դավաճանական ծրագիրը։ Առանձին դաշնակցական ակտիվ գործիչներ անցնում են պրակտիկ գործի։

Դաշնակների ազգային խորհրդի նախագահ Ջիլինգարյանը, հայտնի դաշնակցական գործիչներ վաճառական Զ. Թումանյանը և ուսուցիչ Սուխիկյանը Հայաստանում հիշած ընկերությանց բաժանմունքներ ստեղծելու խնդրում օգնում էին Անդերսին և մարդկանց հավաքագրում էին հետախուզական և այլ աշխատանքների համար։ Նրանց հակաժողովրդական գործունեության փաստերն անթիվ անհամար են։ Անդերսն ու նրա հետախույզները, որոնց թվում և դաշնակները, ճանապարհորդում էին ամբողջ Հայաստանով և զանազան առաջադրություններ էին կատարում. այդ դեպքում գերմանացիք օգտագործում էին այն դժգոհությունը, որ առաջ էր գալիս ո՛չ ռուս ժողովուրդներին ռուսացնելու բռնի քաղաքականության հետևանքով։ Անդերսին հատկապես հետաքրքրում էր սահմանամերձ շրջանների բնակչության բարոյական-քաղաքական վիճակը, սահմանների պահպանման վիճակը, զորքերի դասավորությունը, սահմանների ամրությունները, կոմունիկացիաները։ Կազմվում էին քարտեզներ, սխեմաներ, մանրամասն զեկուցագրեր։

Հատուկ ուշադրություն էր հատկացվում սահմանամերձ շրջաններում ազգաբնակության մեջ քաղաքական աշխատանք կատարելուն, որը իրագործվում էր դաշնակների, թուրքական հետախույզների օգնությամբ, որոնք լավ գիտեին տեղացիների լեզուն, կենցաղն ու բարքերը։ Գերմանացիներին այդ տեսակետից քիչ ծառայություն չէր ցույց տալիս «գերմանա-թուրքական-վրացական կոմիտեն». վերջինիս առանձին անդամները վրաց նացիոնալիստ-էմիգրանտներից էին և բայթաշիլ աշխատանք էին կատարում Վրաստանում։ Դրանց թվին էին պատկանում դիվերսանտ Թավդգերիձեն, Ասլան բեկ Աբաշիձեն, Համիդ բեկ Բեժանիձեն և ուրիշները։

Արխիվային նյութերի հիման վրա գրքում ցույց է տրված, որ չնայած գերմանաթուրքական գործակալության գործունեության նկատմամբ տեղական իշխանությունների լիբերալ բարեհոգի վերաբերմունքին՝ հետախուզական օրգանները հետևում էին թուրքական և գերմանական հետախույզների յուրաքանչյուր քայլին։

Պատերազմի սկզբում Անդերսը կալանավորվեց Թիֆլիսում։ Ֆոն Շուլենբուրգին հաջողվեց փախչել Տրապիզոն։ Հենց այդ օրերին էլ Թիֆլիսում բանտարկվել էին դրքի մեջ հիշված խոշոր հետախույզներից 51 հոգի, իսկ սեպտեմբերին էլի 71 մարդ։ Այսպիսով բացառությամբ առանձին գործակալների, գերմանա-թուրքական գործակալությունը ընդհանրապես ձախողություն կրեց Կովկասում։

Գրքի յոթերորդ և վերջին գլուխը նվիրված է հայերի բնաջնջման թուրքական պլաններին և այն վերաբերմունքին, որ կոտորածների նկատմամբ ցույց էին տալիս գերմանական և անգլո-ամերիկյան իմպերիալիստները, որոնք արտաքուստ սրտացավ վերաբերմունք ցույց տալով, գործնականում գոհունակությամբ էին դիտում թուրքերի արյունալի հանցագործությունները, հայերի և ուրիշ ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ։

Ար. Մնացականյանը վերջում տալիս է գրքի մեջ նկարագրված դեպքերի ընդհանրացնող վերլուծությունը։ Նա ճիշտ է նշում, որ գերմանա-թուրքական գործակալությունը, այնուամենայնիվ կարողացավ Կովկասում ծավալել լրտեսական գործունեություն։ Դա մի կողմից բացատրվում է օտարերկրացիների՝ երկրի էկոնոմիկայում ունեցած տիրապետող դիրքով, և տիրապետող դասակարգերի՝ նրանց առաջ ունեցած ստորաքարշությամբ, իսկ մյուս կողմից նրանով, որ ցարական պահնորդական բանտին ու ժանդարմերիան ավելի շատ զբաղված էին Ռուսաստանի ռևոլյուցիոն մասսաների դեմ ուղղած պայքարով, քան թե օտարերկրյա լրտեսության դեմ միջոցներ ձեռք առնելով։

Գերմանա-թուրքական իմպերիալիզմի գործակալության ձախողումը Կովկասում՝ բացատրվում է նրանով, որ նրանց պլանները ցնորամիտ էին, ռեալ չէին և որ գլխավորն է, Անդրկովկասի աշխատավորները չէին ենթարկվում թշնամու պրոպագանդային։ Կովկասի ժողովուրդների միջև եղած բարեկամությունը, սերը դեպի ռուս ժողովուրդը և նրա հետ ունեցած շահերի ընդհանրությունը, ներքին և արտաքին թշնամիների դեմ մղվող պայքարում՝ միացնում էին նրանց, ռուս մեծ ժողովրդի ղեկավարությամբ։

Իր քաղաքական նշանակությամբ օգտակար և ակտուալ այս գիրքը ունի մի շարք թերություններ։

Դրանցից մեկը պետք է համարել այն, որ գերմանա-թուրքական գործակալության գոր-

ծունեությունն Ադրբեջանում, լուսաբանված է ոչ բավականաչափ։ Հայտնի է, որ Ադրբեջանն ու հատկապես Բաքուն միշտ եղել և մնում են օտարերկրյա իմպերիալիստների և նրանց հետախուզական օրգանների ուշադրության կենտրոնում։ Ինչպես երևում է, գրքի հեղինակը հնարավորություն չի ունեցել լրիվ օգտագործել Ադրբեջանի արխիվներն ու եղած գրականությունը, ինչպես օրինակ ԻՄՆԼ-ի Ադրբեջանական ֆիլիալի աշխատություններում եղած նյութերը։

Գրքի մեջ հարկ եղած չափով խոսվում է դաշնակների մասին, սակայն մեր կարծիքով, քիչ ուշադրություն է հատկացված Կովկասում հանդես եկած մյուս ռեակցիոն նացիոնալիստական վաճառված էլեմենտների գործունեությանը, որը ծավալվում էր օտարերկրյա իմպերիալիստների օգտին։ Միայն լրիվերորդ գլխում է խոսվում անգլո-ամերիկյան իմպերիալիստների վարքագծի մասին, որոնց Կովկասը հետաքրքրում էր գերմանա-թուրքական զավթիչներից ոչ պակաս։ Ցանկալի էր ցույց տալ համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին Կովկասում գործող այդ հակամարտ խմբերի հակասությունները։ Գրքի լրիվերորդ գլխում խոսվում է շատ համառոտակի հայերի բնաջնջման պլանների և վերջիններիս նկատմամբ իմպերիալիստների ունեցած վերաբերմունքի մասին. ի դեպ պետք է ասել, որ այդ խնդիրը կարելի էր առանձնացնել և շարադրել որպես մի ինքնուրույն թեմա։

Ցանկալի է, որպեսզի հեղինակն այդ բացերը լրացնի իր աշխատության երկրորդ մասում, որը, ինչպես խոստանում է, պիտի ընդգրկի գերմանա-թուրքական ագենտների գործողությունները՝ 1914—1920 թվականներին։

Այդ թերությունները չեն փոքրացնում Ա. Մնացականյանի գրքի նշանակությունը։ Այդ աշխատանքը շատ օգտակար է և ուսանելի աշխատավորների բաղաքական զգոնությունը բարձրացնելու գործում, ուսանելի է մանավանդ այժմ, դեմոկրատական և պրոգրեսիվ ուժերի կողմից ռեակցիայի և նոր համաշխարհային պատերազմի հրձիգների դեմ մղվող պայքարի պայմաններում։

ՀՈՎՀ. ԻՆՃԻԿՅԱՆ